

**ՅՈՒՐԵԼԵԱՆՆԵՐ**

**ՆԵՐՍԵՀ ԱՔԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ**

Երեւանի Պետական Համալսարանի  
Հայ բանասիրութեան ֆակուլտետի՝  
ակադ. Հրանդ Թամրազեանի անուան  
Հայ գրականութեան պատմութեան  
ամբիոնի հայցորդ

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ՝  
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ  
(Ծննդեան 150-ամեակի առթիւ)**

Լրացաւ հայ ժողովրդի եւ գրականութեան հպարտութիւնն ու պարծանքը հանգիսացող՝ Ամենայն Հայոց Բանաստեղծ՝ Յովհաննէս Թումանեանի ծննդեան 150-ամեակը, որի հմայիչ անուան հետ կապուած են 19-րդ դարի վերջին շրջանի եւ 20-րդ դարի սկզբի արեւելահայ բանաստեղծական գրականութեան մի շարք գեղեցիկ ստեղծագործութիւններ ու առաջին լուրջ նուաճումները: Անմահացաւ նա որպէս լաւագոյն պոեմներ կերտող եւ ժողովրդական դիւցազներգութիւններ, աւանդութիւններ ու հէքեաթներ մշակող մի մեծ ճարտարապետ, որպէս նահապետական գիւղը պատկերող վարպետ նկարիչ եւ հայ ժողովրդի վիշտն ու ցաւն երգող քնարերգակ երգիչ, որպէս մանկական յայտնի բանաստեղծ եւ վերջապէս, ժողովուրդների եղբայրութեան ու աշխարհի խաղաղութեան լաւագոյն դրօշակակիր:

Որքան գեղեցիկ է Յովհաննէս Թումանեանի բանաստեղծութիւնը, նոյնքան բանաստեղծական էր եւ իր կեանքը:

Յովհաննէս Թումանեանը մեր այն գրողերից է, որոնք ուղղակի մայր հողի արգանդից են ծնւում եւ որոնց ամբողջ կեանքը, ամբողջ գրականութիւնը հայրենի հողի բոյրով է թաթախուած: Մինչ Պետրոս Դուրեանի կամ Վահան Տէրեանի բանաստեղծութիւնները կարգացողը չի կարող ասել թէ աշխարհի ո՞ր անկիւնում հրնշող ձայներն են լցրել այդ բանաստեղծների հոգիները, անկարելի է երեւակայել Յովհաննէս Թումանեանը առանց Լոռիի, ինչպէս Ա. Իսահակեանը՝ առանց Արագածի: Եթէ բնութեան սքանչելի պարգեւը՝ ստեղծագործ տաղանդը Յովհաննէս Թումանեանին տուել էր սովորական մարդկանց հայեացքներից ծածկուած իրերի խորքը թափանցելու սրատեսութիւնը եւ սովորական ականջների համար անլսելի հնչիւնների թրթիռը բռնելու նուրբ լսողութիւնը, ապա մեր բանաստեղծի հայրենիքը՝ Լոռին առատօրէն մատակարարել էր նրան ե՛ւ գոյներ, ե՛ւ հնչիւններ<sup>1</sup>: Բնութեան վեհ տեսարաններով եւ անցեալի յիշատակներով հարուստ այս լեռնաշխարհի գիւղերից մէկը՝ Դսեղն է ծննդավայրը Յովհաննէս Թումանեանի, որն էլ ներշնչել է նրան բանաստեղծական ոգի եւ իր կնիքն է դրել նրա ստեղծագործութիւնների վրայ:

**Մեր գիւղն էն է, որ հպարտ,  
Լեռների մէջ միգապատ,  
Խոր ձորերի քարափին,**

<sup>1</sup> Տէս Ահարոնեան Վ., Յովհաննէս Թումանեան մարդը եւ բանաստեղծը, Բոստոն, 1936, էջ 11-12:

**Ձեռքը տրած ճակատին,**

**Միտք է անում տխրադէմ.**

**Ինչ է ուզում՝ չը գիտեմ...<sup>2</sup>**

Թումանեանը ծնուել է 1869 թ. Փետրուարի 19-ին: Գրել-կարգալ սովորել է հօր՝ Տէր Թադէոսի մօտ, որ Դսեղ գիւղի քահանան էր: «Ամենալաւ եւ ամենամեծ բանը,- գրում է բանաստեղծը իր ինքնակենսագրութեան մէջ,- որ ես ունեցել եմ կեանքում, այդ եղել է իմ հայրը: Նա ազնիւ մարդ էր եւ ազնուական՝ բառի բովանդակ մտքով: Չափազանց մարդասէր ու առատաձեռն, առակախօս ու զուարճաբան, սակայն, միշտ ունէր մի խոր լրջութիւն»<sup>3</sup>:

Իր ժամանակի առաջադէմ այդ հոգեւորականը հասկանալով կրթութեան նշանակութիւնը, որդուն ներշնչում է ուսման սէրը:

Նախնական կրթութիւնը Թումանեանը ստանում է 1877 թ.-ին՝ Սհակ վարժապետի «դպրոցում»: «Մեր Սհակ վարժապետը,- գրում է Թումանեանը իր ինքնակենսագրութեան մէջ,- մեզ կառավարում էր «գաւազանաւ երկաթեալ»: Իր երկաթէ գաւազանը, որ հրացանի շամփուրի էր նման, երբեմն ծռում էր երեխաների մէջքին, ականջները «ոտրեման» էր անում եւ մեծ կաղնեան քանոնով «շան լակոտներ»՝ ձեռների կաշին պլոկում...»<sup>4</sup>: Ահա թէ ինչու այդ դպրոցում Յովհաննէսը երկար չի մնում: Տասը տարեկան հասակում՝ 1879 թ.-ին, անցնում է Զալալ-Օղլի (իմա՝ Ստեփանաւան - Ն.Ա.Ա.), եւ մտնում է Տիգրան վարժապետի նորաբաց երկսեռ քառամեայ դպրոցը, որն անհամեմատ աւելի բարձր էր եւ աւելի օրինակելի, քան Սհակի «Դպրոցը»: Այստեղից էլ 12-13 տարեկանում անցնում է Թիֆլիս՝ Ներսիսեան դպրոց, ուր սովորում է միայն երեք տարի: Նիւթական աննպաստ պայմանները թոյլ չեն տալիս, որ նա աւարտի դպրոցը եւ 1886 թ.-ի վերջին բաժանուում է իր ընկերներից: Հացի խնդիրը ստիպում է նրան մտնել ծառայութեան եւ հինգ տարի շարունակ, 1887-1892 թթ. նա աշխատում է Թիֆլիսի հայկական հոգեւոր կոնսիստորիայում՝՝ իբրեւ գրագիր: Այստեղ էլ փոխանակ իր պաշտօնը կատարելու, ծաղրական ոտանաւորներ է գրում առաջնորդի եւ քահանաների մասին, ինչը, իարկէ, դուր չի գալիս նրանց եւ հետեւանքը այն է լինում, որ Թումանեանին արձակում են պաշտօնից: Թէ որքան ծանր է անցել այդ միջավայրում նրա կեանքը, տեսնում ենք բանաստեղծի՝ Անուշաւան Աբովեանին ուղղուած 1892 թ., մարտի 24 թուակիր մի նամակում, ուր կան այսպիսի բնորոշ տողեր. «Խոր տրամուրթամբ եմ նայում հինգ հոգեհան տարիների անցեալիս վրայ, որպէս մի գերեզմանի, դժոխի, որից դուրս եմ եկել»:

Ճիշդ է, Թումանեանն իր կեանքի որոշ շրջանում մի քանի տեղ մտնում է ծառայութեան, բայց իր կոչմանը անհամապատասխան գտնելով՝՝ ո՛չ մի տեղ էլ երկար չի մնում: Ծառայելու հակում չունէր: Նրա կոչումը գրականութիւնն էր, բանաստեղծութիւնը:

1881 թ.-ից նա իր ամբողջ կեանքը նուիրում է հայ գրականութեանը, հայ բանաստեղծական մշակոյթին եւ հայ ժողովրդին: Առաջին ոտանաւորը գրել է այն հասակում, որ պատանեկան կոչելն իսկ վաղաժամ է.

**Հոգուս հատոր,**

**Սըրտիս կըտոր,**

**Դասիս համար**

**Դու մի՛ հոգար,**

**Թէ կան դասեր,**

<sup>2</sup> Թումանեան Յ., Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով, հ. 3, Երեւան, 1989, էջ 9:

<sup>3</sup> Թումանեան Յ., Ընտիր երկեր, Հայ դասականանների գրադարան, Երեւան, 1978, էջ 396:

<sup>4</sup> Նոյն տեղում, էջ 397:

\* Նախահեղափոխական Ռուսաստանում թեմական վերնախաւին կից կազմակերպութիւն՝ եկեղեցա-վարչական, եկեղեցա-դատական իրաստութիւններով:

Կայ նաև սէր,  
 Եւ ինչ զարմանք,  
 Իմ աղանձակ,  
 Որ կենդանի  
 Մի պատանի  
 Սէրը սրտում  
 Գաս է սերտում:

Նա գրել է այս տողերը ի պատասխան դասընկերուհու գրութեան՝ չլինի՞ թէ սիրով տարուած՝ դասերդ մոռանաս: Սիրոյ տասներկուամեայ ասպետն իմացել է ինչ պատասխանի, գրել է մի ոտանաւոր, որ այսօր էլ գրաւիչ է երեխայական անմեղութեամբ, թեթեւ հումորով, սահուն տողերով: Սակայն, նրա գրականութեան իսկական պատմութիւնն սկսում է 1880-ական թուականների երկրորդ կէսից:

17 տարեկան հասակում, 1886 թ.-ին, առաջին անգամ իր «Շունն ու Կատուն» հրատարակելու համար Յովհաննէս Թումանեանը դիմել է այն ժամանակուայ ամենալաւ գրական ամսագրի՝ «Մուրճ»-ի խմբագիր Ա. Արասխանեանին: Եւրոպական կրթութիւն ստացած, վերին աստիճանի քաղաքաւարի եւ շափից աւելի բարեմիտ, բայց գրական խեղճ ճաշակով Ա. Արասխանեանը յուզուել, վրդովուել է, որ վարդից եւ սոխակից դուրս ուրիշ բաներ էլ, եւ այն էլ շուն ու կատուի նման բաներ կարող են բանաստեղծութեան նիւթ դառնալ: «Տարօրինակ բան, ինչպէ՞ս կարելի է շան եւ կատուի մասին բանաստեղծութիւն գրել: Փորձեցէ՛ք մի քիչ աւելի յարմար նիւթեր ընտրել, պարոն, ասել է «Մուրճ»-ի վրդովուած խմբագիրը, Թումանեանին վերադարձնելով «Շունն ու Կատուն»-ի ձեռագիրը<sup>5</sup>:

1890 թ.-ին Մոսկուայում լոյս է տեսնում Թումանեանի բանաստեղծութիւնների առաջին ժողովածուն, իսկ երկու տարի յետոյ՝ 1892-ին, հրատարակում է նրա երկրորդ գիրքը, որն ընգրկում էր եւ Ա. Արասխանեանի մերժած «Շունն ու Կատուն», ինչպէս նաեւ «Անուշ» պոեմի առաջին տարբերակը:

Տաս տարի յետոյ, 1900-ական թուականների սկզբին, Կովկասում եւ մասնաւորապէս Թիֆլիսում չկար դպրոցական տարիքի մի հայ մանուկ, որ կամ կարդացած չլինէր, կամ անգիր շարտասանէր Յովհաննէս Թումանեանի «Շունն ու Կատուն»:

1903 թ.-ին, Թիֆլիսում, շքեղ հրատարակութեամբ, լոյս է տեսնում նրա «Բանաստեղծութիւններ» վերնագրով մեծ ժողովածուն, որ բովանդակում էր նրա լաւագոյն բանաստեղծութիւնները, նշանաւոր պոեմները եւ թարգմանութիւնները: Այդ գրքով առաջին անգամ հասարակութեանը ներկայացաւ «նոր Թումանեանը»՝ նախորդ տարիների գեղարուեստական թերութիւններից իսպառ ազատագրուած եւ ռեալիստական պոեզիայի բարձունքներին հասած բանաստեղծը: Պէտք է ասել, որ հէնց այդ գրքով էր, որ Թումանեանը դարձաւ արեւելահայ բանաստեղծութեան խոշորագոյն, առաջատար դէմքը: Նրա դասական շատ երկերի, մանաւանդ հանրայայտ պոեմների ու բալլադների հիմնովին վերամշակուած, բարձրագոյն գեղարուեստական մակարդակի հասցուած բնագրերը առաջին անգամ երեւան եկան հէնց այդ ժողովածույի մէջ:

1908 թ.-ին Բաքուում հրատարակում է «Բանաստեղծութիւններ» նոր ժողովածուն, որն իր բնագրով զգալիօրէն տարբերում էր նախորդից. բնագրերի մէջ մտցուել էին բազմաթիւ փոփոխութիւններ եւ լրացումներ, հանուել էին մի շարք երկեր եւ աւելացւել նորերը (օրինակ՝ «Թմկաբերդի առումը»): Սակայն պէտք է նշել, որ այս ժողովածուն տպագրուեց առանց հեղինակի անմիջական վերահսկողութեան, որն էլ պատճառ

<sup>5</sup> Տե՛ս Ահարոնեան Վ., Յովհաննէս Թումանեան մարդը եւ բանաստեղծը, Բոստոն, 1936, էջ 55-56:

դարձաւ մի շարք վրիպակների եւ աղճատումների (դրանց մի մասը Թումանեանը նշել է գրքի հեղինակային օրինակների վրայ):

1920-1930-ական թուականներին յետ մահու լոյս տեսան Թումանեանի երկերի մի քանի ժողովածուներ, եղան առանձին երկերի բազմաթիւ հրատարակութիւններ: Սակայն իրենց բովանդակութեամբ եւ գրական-հասարակական նշանակութեամբ յիշատակութեան են արժանի հատկապէս 1934 թ.-ին, Երեւանում, բանաստեղծ Եղիշէ Չարենցի խմբագրութեամբ լոյս տեսած Թումանեանի «Գեղարուեստական երկեր» մեծադիր ժողովածուն եւ 1939 թ.-ին Նուարդ Թումանեանի կազմած «Թումանեանը քննադատ» ժողովածուն, որում առաջին անգամ ի մի են բերուել մամուլում ցրուած Թումանեանի յօդուածների ու ելոյթների մի զգալի մասը, հատուածներ նրա անտիպ նամակներից:

«Գեղարուեստական երկեր»-ը դա մէկ հատորի մէջ Թումանեանի գրեթէ ամբողջ գեղարուեստական ատեղծագործութիւնը ի մի հաւաքելու փորձ էր: Այդ հրատարակութեանը, բացի խմբագիր Եղիշէ Չարենցից, գործուն մասնակցութիւն է բերել նաեւ բանաստեղծի դուստր Նուարդ Թումանեանը: Գրքի առաջաբանից իմանում ենք, որ այս հատորը ծնուել է Թումանեանի երկերի լիակատար ժողովածուի նախապատրաստման ընթացքում, մի հրատարակութիւն, որ պէտք է կազմուած լինէր երեք մեծադիր հատորից եւ ունենար համապատասխան ծանօթագրութիւններ ու զանազան ցանկեր (իմա՛ գիտական ապարատ – Ն.Ա.Ա.): Այդ ծրագիրը հետագայում փոխարինուեց մէկ հատորեակով, որը ներկայացնում է Թումանեանի գրական ժառանգութիւնը՝ ըստ հիմնական ժանրերի՝ պոեմներ, լեզենդներ եւ բալլադներ, երգեր, քառեակներ, պատմըւածքներ, հէքեաթներ, թարգմանութիւններ եւ փոխադրութիւններ: Բացի աւարտուն երկերից, առաջին անգամ հրատարակուեցին նաեւ մի քանի տասնեակ անտիպ բանաստեղծութիւններ, սեւագիր հատուածներ «Հառաչանք», «Անուշ», «Սասունցի Դաւիթը», «Հազարան պլպուլ» պոեմներից:

Այս բոլոր լեզենդներն ու պոեմները, հէքեաթներն ու պատմըւածքները, որ թողել է մեզ Յովհաննէս Թումանեանը, մենք հմայուած կարդացել ենք, կարդում ենք եւ դեռ շա՛տ ենք կարդալու: Դրանք մեր անմեռ սեփականութիւնն են եւ ոչ ոք, անգամ անողօք ժամանակը, չի կարող զրկել մեզ դրանցից, որովհետեւ նա իր քնարի լարերի վրայ հնչեցրել է մէկը միւսից գեղեցիկ լիրիկական մոթիւններ, որոնցով նա երգել է իր հոգեկան զգացումները, իր սիրային յոյզերը, վիշտն ու թախիծը:

Լիրիկական բանաստեղծութիւններում երբեմն յոռետես է, մռայլ եւ վշտոտ: Թախծոտ է նրա հոգին, որովհետեւ չկայ ոսկեվառ արշալոյս, չկայ երջանկութիւն, չկան վառ աստղեր: Կեանքը լի է ծանր հոգսերով ու վշտերով: Քնարական, «Իմ սէրը», «Կարօտ», «Իմ երգը», «Ուրու», ոտանաւորները, որոնք մեծ մասամբ արդիւնք են տիրող մռայլ ժամանակի եւ միջավայրի, արտայայտում են բանաստեղծի անկումային տրամադրութիւնները:

Թումանեանի գրական վաստակի մեծ մասը սերտ կապուած է ժողովրդական ստեղծագործութեան հետ: Ինչպէս ինքը՝ Թումանեանն է գրում. «Ես ժողովրդից եմ առնում իմ նիւթերը եւ լեզուն ու նրա հետ եմ խօսում»<sup>6</sup>: Իր գրական գործունէութեան հէնց առաջին շրջանում նա անսահման սիրով հաւաքել է ժողովրդական բանահիւսութեան բազմաթիւ հիասքանչ նմուշներ: Գրի է առել ժողովրդական հէքեաթներ, առակներ, երգեր, լեզենդներ եւ անզուգական վարպետութեամբ մշակել է դրանք: Ուսումնասիրելով ժողովրդական ստեղծագործութեան արուեստի նրբութիւններն ու վեհութիւնը, գեղարուեստական աւելի բարձր աստիճանի է հասցրել: Այդ առումով Թու-

<sup>6</sup> Թումանեան Յ., Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով, հ. 6, Քննադատութիւն եւ հրապարակախօսութիւն 1887-1912, Երեւան, 1994, էջ 470:

մանեանի պոեմների մէջ առանձնայատուկ տեղ է գրաւում «Անուշ»-ը, որը կերտելիս բանաստեղծը վարպետօրէն օգտագործել է ժողովրդական գրականութեան արւեստի գեղեցկութիւնները: Այնտեղ նա ո՛չ միայն նուրբ վրձնով պատկերել է նահապետական գիւղում ապրող ժողովրդի հոգեկան ապրումներն ու խոհերը, ուրոյն կենցաղը, վիշտն ու ծիծաղը, այլեւ ժողովրդական ոճով, պատկերներով ու նրբութեամբ գծագրել է «Անուշ»-ի քնարական բազմաթիւ էջեր, յատկանիշներ, որոնց շնորհիւ պոեմը հայ բանաստեղծական գրականութեան գեղարուեստական հոյակապ ստեղծագործութիւնների շարքում պատուաւոր տեղ է գրաւում:

Ժողովրդական արուեստի պատուանդանի վրայ կերտուած տարբեր գեղեցկութիւններ են Թումանեանի մշակած ժողովրդական հէքեաթները, որոնցից ուրոյն տեղ են գրաւում «Քաջ Նազար»-ը, «Ոսկու կարաս»-ը, «Անյաղթ Աքլոր»-ը եւ ուրիշներ, որոնք ցոյց են տալիս բանաստեղծի սերտ կապը ժողովրդական ստեղծագործութեան հետ: Դա երեւում է յատկապէս ժողովրդական դիւցազներգութեան գոհարներից «Սասունցի Դաւիթ»-ում, որը Թումանեանը մեծ վարպետութեամբ մշակելով՝ հայ ժողովրդին նուիրել է հիասքանչ մի պոեմ:

Թումանեանը ժողովրդական բանահիւսութիւնը հիմք ունենալով՝ գեղարուեստական նրբութեամբ կերտել եւ հայ բանաստեղծական գրականութեան էջերը զարդարել է նաեւ քնարական երգերով, որոնցից յիշատակելի են «Կաքաւի գովքը», «Սոխակի վիշտը», «Գարնան առաւօտը» եւ այլ բանաստեղծութիւններ, որոնք ընդգծում են Թումանեանի ժողովրդական ոճով ու գունագեղութեամբ մշակելու վարպետութիւնն ու հմտութիւնը:

Նա մէկն է այն լաւագոյն բանաստեղծներից, որ անկեղծօրէն սիրել է աշխատաւոր, ստեղծագործող ժողովրդին եւ իր գեղեցիկ բանաստեղծութիւններով դրսեւորել է նրա հոգեկան հարուստ ու գունագեղ ապրումները: Երգել ու պատկերել է գլխաւորապէս նահապետական ժողովրդի եւ նրա կեանքի ու կենցաղի ամենաբնորոշ երեւոյթները, որոնցում, կարծէք, լեռնական ժողովուրդն է խօսում ձեզ հետ: Այդ պարզ, հասարակ ժողովուրդի հերոսներն ու դիւցազուններն են գծագրում ձեր աչքերի առջեւ: Թումանեանը հէնց գիւղական հասարակ ժողովրդի, գեղչուկի երգիչն է: Իր քնարի հիմնական մոթիւններով նա Հայաստանի լեռնային մասի, գլխաւորապէս խաշնարած հայ գիւղի նկարիչն է: Դրսեւորել է նահապետական գիւղում ապրող, աշխատող եւ ստեղծագործող գիւղացիների հոգեբանութիւնը, նրանց տենչերն ու ձգտումները: Նա միաժամանակ գիւղի բնութեան գեղանկարները, գիւղական չքնաղ տեսարանները վրձնող տաղանդաւոր վարպետ բանաստեղծն է: Գիւղական բազմերանգ համայնապատկերը հարազատութեամբ տեսնում ենք նրա լեզենդներում, պոեմներում եւ բալլադներում: Մեր աչքի առջեւ պատկերանում է հայ նահապետական խուլ, ինքնամփոփ, հին գիւղը՝ իր քաջերով, աւանդական սովորութիւններով, աղաթներով, հրաշքներով եւ անոտիապաշտութիւններով: Տեսնում ենք գիւղացիներին իրենց ուրոյն կենցաղով, իրենց խինդ ու ծիծաղով իրենց հոգսերով ու ցաւերով:

Հայ բանաստեղծներից շատերն են երգել գիւղի կեանքը, վրձնել գիւղական նկարներ, բայց նրանցից ոչ մէկը չի կարողացել Թումանեանի «Հին օրհնութեան» նման գիւղական մի սքանչելի բնանկար ստեղծել: Այս բանաստեղծութեան մէջ տեսնում ենք գիւղի կանաչ, վիթխարի ընկուզենու տակ ծալապատիկ նստած մեր միամիտ, բարի, իմաստուն պապերին, որոնց առջեւ գլխաբաց եւ խոնարհ կանգնած գեղջուկ մանուկներն ուրախ տաղ են ասում: Երաժշտութիւնը յուզում է պապերի հոգեկան աշխարհը եւ ահա նրանցից ամենամեծն օրհնում է մանուկներին, կտակելով միայն մի բան՝ «Ապրէ՛ք, երեխէ՛ք, բայց մեզ պէս չապրէ՛ք», որովհետեւ իրականութիւնը դառն է ու մռայլ:



Թումանեանը երկար տարիներ ապրելով գիւղում, տեսնում է չքաւոր գիւղացիների տնտեսական քայքայումը: Ականատես լինում գիւղական վաշխառուներից խոշոր տոկոսներով փող վերցնող եւ նրանց ծանրութեան տակ քայքայուող շինականների եւ մանր հողագործների թշուառութեան պատկերը: Տեսնում է վաշխառուների անխիղճ հարստահարութիւնները եւ սրտի դառնութեամբ գծում չքաւոր գիւղացիների պատկերը: Երգում է նրանց կեանքի դառնութիւնն ու ցաւերը: Այդ առումով մեծ արժէք են ներկայացնում՝ «Դժուար Տարի», «Հառաչանք» պոեմը, «Գիքորը» եւ ուրիշներ, որոնք գիւղի կեանքը պատկերող գրական տարբեր գեղեցկութիւններ են, որոնցով Թումանեանը ցոյց է տուել հայ աշխատաւոր չքաւոր գիւղացիութեան տնտեսական եւ իրաւական մռայլ եւ անմխիթար դրութիւնը:

Ուշագրաւ է մի հանգամանք, որ Թումանեանի վրձնած գիւղական պատկերներում աշխատաւոր գիւղացիները ո՛չ միայն շատ խորն են զգում ժամանակի տիրող կարգերի ամբողջ դառնութիւնը, այլեւ բողոքում են թէ՛ ազգային եւ թէ՛ դասակարգային անհաւասարութեան, բռնութեան եւ ճնշման դէմ:

Մեծ վարպետութեամբ պատկերել է նաեւ գիւղի մռայլ ու բացասական երեւոյթները, անդրադարձել է ո՛չ միայն կեղեքողների կերպարներին, այլեւ պատկերել գիւղում իշխող դարաւոր տգիտութիւնը, յետամնացութիւնը, նախապաշարումները, կնոջ ստրկական վիճակը եւ այլ երեւոյթներ:

Թումանեանի վրձնած գիւղական հիասքանչ պատկերներ են «Մարոն», «Լոռեցի Սաքոն», «Անիծած հարսը»:

Հայ աշխատաւոր գիւղացիների կեանքի տարբեր էջերը ցոլացնող մէկը միւսից յուզիչ պատկերներ են նաեւ «Գիքորը», «Քեռի խէշանը», «Իմ ընկեր Ներսոն» եւ ուրիշներ, որոնք գրուած են գրական բարձր արուեստով եւ այնքա՛ն պարզութեամբ:

Մի շարք ոտանաւորներով Թումանեանն արտայայտել է իր հայրենասիրական անկեղծ զգացումներն ու ապրումները: Նրա հայրենասիրութեան աղբիւրը հայ ժողովրդի երջանկութեան եւ հայրենիքի ազատութեան գաղափարն է: Նա երգել է իր «զրկուած ու զարկուած հայրենիքի» եւ ցարական ու սուլթանական դաժան բռնութեան պայմաններում ապրող ճնշուած հայ ժողովրդի ծանր վիճակը, երգել է նրա ծով վիշտն ու թախիծը: Երգել է նաեւ նրա հերոսական պայքարի պատմութիւնը «Սասունցի Դաւիթ», «Թմկաբերդի առումը»: Այդ երգերով նա ժողովրդի մէջ վառ է պահել հայրենիքի սէրը եւ հրահրել է նրա հոգում ազատագրական պայքարի ոգին: Երբեք չի վհատուել, անձնատուր չի եղել յոռետեսութեանը՝ անգամ հայ ժողովրդի ամենամռայլ շրջանում: Խորը հաւատով է նայել հայութեան քաղաքական-մշակութային վերածնութեանը եւ միշտ լաւատեսութեամբ համակուած՝ պատկերել է հայրենիքի լուսաւոր եւ պայծառ ապագան:

Բանաստեղծի հայրենասիրական ջերմ ու անկեղծ զգացումներն ու տրամադրութիւններն արտայայտող երգերի մի գեղեցիկ ծաղկեփունջ են կազմում՝ «Հայոց վիշտը», «Հայոց լեռներում», «Գիշեր», «Մեր նախորդներին», «Կաքաւի ողբը», «Տրտմութեան սաղմոսներից» եւ ուրիշներ, որտեղ հնչում են հայրենիքի պաշտպանութեան եւ ազատութեան երգերը:

Թումանեանը կեանքի վերջին տարիներին գրել է նաեւ քառեակներ, որոնք նրա բանաստեղծական արուեստի մէջ առանձին տեղ են գրաւում: Չորս տողից բաղկացած այդ պարզ, բայց գեղեցիկ ոտանաւորներում, որոնք իրենց կառուցուածքով յիշեցնում են Օմար Խայեամի արուեստը, Թումանեանը պատկերել է իր մտորումներն ու հայեացքը կեանքի, մահուան, բնութեան, աշխարհի եւ այլ երեւոյթների մասին:

Կեանքի եւ մահուան իմաստը նկարագրող քառեակներից մէկում իշխում են մը-

ուսյլ խորհրդածուծիւնն ու յոռետես տրամագրութիւնը:

**Երկու շիրիմ իրար կից,  
Յաւերժական լուռ դրկից.  
Թախծում են պաղ ու խորիում,  
Թէ ինչ տարան աշխարհից:**

Թուժանեանը, որպէս անուանի բանաստեղծ, հայ մանկական գրականութեան պատմութեան մէջ եւս ունի իր պատուաւոր տեղը: Նա, Մաքսիմ Գորկու նման, շատ էր սիրում երեխաներին եւ նրանց հանդէպ առանձին սէր ու գուրգուրանք ունէր: Ահա թէ ինչ է գրում նա իր ծննդեան յիսնամեակի առիթով իր ժամանակի երեխաներին. «Հարագաւ են ինձ բոլոր երեխաները, ձեր աշխարհը, որը եւ իմ աշխարհն է, սիրում եմ ձեզ եւ ձեր աշխարհը: Կեանքիս ամենապայծառ ու ամենալաւ օրերն ու վայրկեանները դուք էք ինձ առել, սիրելի մանուկներ, ձեզ հետ եմ եղել, ձեզանով եմ ապրել»<sup>7</sup>: Ուստի միանգամայն բնական եւ օրինաշարի են մանուկների բարեկամի՝ առողջ սերունդ դաստիարակելու ջանքերը, որոնք գործադրել է նա թէ՛ դպրոցական դասագրքեր կազմելով, թէ՛ մանկական պարբերականներին ունեցած մասնակցութեամբ, թէ՛ մանուկների համար ստեղծած սքանչելի երկերով:

Թուժանեանը լաւ էր գիտակցում, որ մանկական գրականութեան առանձնայատկութիւններն ամէն գրող չէ, որ կարող է հաշուի առնել եւ յաղթահարել մանկական լիարժէք գրուածքներ ստեղծելու հետ կապուած դժուարութիւնները: Իր բառերով ասած, «հեշտ ու հանաք բան» չէ մանկական գրուածք գրելը: Ուստի, նրբանկատ մանկագիրը, լինելով հոգեբան-արուեստագէտ, գտնում էր, որ մանկական գրողը առաջին հերթին պէտք է նկատի ունենայ երեխայի տարիքային եւ հոգեբանական առանձնայատկութիւնները, ճշմարտացի բացայայտի մանուկների հոգեկան աշխարհը, եւ անհրաժեշտութեան դէպքում տեղայնացնի նիւթը, այն կապի իրականութեան, երեխայի շրջապատի, առօրեայ կեանքի հետ:

Հայ մանկական գրականութիւնը հարստացնելու նպատակով Թուժանեանը մանկագիրներից պահանջում էր, որ նրանք թարգմանեն համաշխարհային մանկական գրականութեան լաւագոյն նմուշները: Իր թարգմանական բեղմնաւոր գործունէութեան ընթացքում նա տուեց կատարեալ թարգմանութեան բազմաթիւ օրինակներ, որոնք աչքի են ընկնում թեմայի ընտրութեամբ, ժանրային ու ոճական առանձնայատկութիւնների գործում ցուցաբերած որոշակի վերաբերմունքով: Իբրեւ օրինակ կարելի է նշել Պուշկինի «Օլեգի երգը», «Ջրահեղձը», «Չմեռուայ իրիկունը», «Ռոմանսը», Ժուկովսկու «Աքիլլեսը», Նեկրասովի «Մայրը», Կոլցովի «Գեղջուկի մտածմունքը», Բլոկի «Մովի երգը», Գեոթէի «Վարդը», Գրիմմ եղբայրներից ինը հէքեաթ եւ այլն:

Թուժանեանը իր ստեղծագործութիւնների գեղարուեստական նրբութեամբ, զգացմունքի շերմութեամբ, խորութեամբ եւ ներքին երաժշտութեամբ մեծ ազդեցութիւն է թողել նաեւ հայ երաժշտագէտների վրայ, որոնցից յատկապէս Կոմիտասը, Ալեքսանտր Սպենդիարեանը, Ռոմանոս Մելիքեանը, Արմէն Տիգրանեանը, Անտոն Մայիլեանը խորապէս ներշնչուել են նրա լիրիկական բանաստեղծութիւնների, պոեմների, լեգենդների գեղարուեստական ու հոգեբանական կառուցուածքից եւ բարձր արուեստով ձայնագրել եւ զարկ են տուել հայ երաժշտական մշակոյթին:

Ալեքսանտր Սպենդիարեանը Թուժանեանի «Թմկաբերդի առումը» խորագրով պոեմը վերածել է «Ալմաստ» օպերայի, Արմէն Տիգրանեանը «Անուշ» պոեմը վերածել է համանուն օպերայի, իսկ Անտոն Մայիլեանը «Գիքորը» պատմուածքը՝ գեղեցիկ օպերետի:

<sup>7</sup> Թումանեան Ն., Յովհաննէս Թումանեան, Երեւան, 1939, էջ 94:

Թուժանեանը ապրելով 19-րդ դարի վերջերին եւ 20-րդ դարի սկզբին, իր ստեղծագործութիւններով ոչ միայն պատկերել է դարաշրջանի կեանքի հրատապ եւ հիմնական էջերը, այլեւ ջերմ սիրով նուիրուել է ժամանակաշրջանի մշակութային-գրական, կրթական եւ լրագրական, հասարակական, նոյնիսկ քաղաքական կեանքի աշխատանքներին:

1899 թ.-ին Թուժանեանը Թիֆլիսի իր բնակարանում հիմնում է «Վերնատուն» գրական խմբակցութիւնը, որի գրօշի ներքոյ համախմբւում էին մի խումբ տաղանդաւոր գրողներ՝ Ղազարոս Աղայեանը, Պերճ Պոռեանը, Շիրվանզադէն, Կոմիտասը, Գ. Բաշինջաղեանը, Աւետիք Իսահակեանը, Դերենիկ Դեմիրճեանը եւ ուրիշներ: Այդ «Վերնատան»-ը կարգացում էին եւ մտքերի փոխանակութեամբ մշակում հայ գրականութեան շատ գեղեցիկ էջերը:

Դարձեալ Թուժանեանն է, որ 1912 թ.-ի աշնանը մի քանի նշանաւոր հայ գրողների հետ հիմնում է «Հայ Գրողների Կովկասեան Ընկերութիւնը», որի վարչութեան նախագահ է ընտրւում եւ այդ պաշտօնում մնում է մինչեւ ընկերութեան փակուելը, որ տեղի է ունենում 1921 թ.-ին:

1921 թ.-ին, Թիֆլիսում, հիմնւում է Հայարտունը (Հայ արուեստի տունը), որի նախագահ է ընտրւում բանաստեղծը:

Ամփոփելով պատկառելի մեծութեան, Ամենայն Հայոց Բանաստեղծ՝ Յովհաննէս Թուժանեանի 150-ամեակին նուիրուած յոբելինական այս կանգառը, պէտք է ասել, որ Թուժանեանը մի ինքնօրինակ ու բացառիկ երեւոյթ է մեր գրականութեան մէջ. մեր ժողովրդի կեանքը, յոյզերն ու աշխարհապատկերացումը նա նկարագրել ու երգել է մի այնպիսի ինքնատիպ, անմիջական արուեստով եւ ժողովրդական հիւթեղ լեզուով ու ոճերով, որ միանգամից դարձել է հարազատ ու սիրելի: Նրա հերոսները այսօր էլ խօսում են մեզ հետ: Երբ ասում ենք Յովհաննէս Թուժանեան՝ մեր աչքի առաջ պատկերանում է մի ամբողջ աշխարհ, որ շարժւում է, շնչում, մեր ականջին է հասնում այդ աշխարհի ժխորը՝ հիացմունքի ու հիասթափութեան ձայներով, ծիծաղներով, վշտերով, հրճուանքի կանչերով, ողբերգական աղաղակներով:

Թուժանեանն աւելի, քան մէկ ուրիշը, ընդլայնեց հայրենական գրականութեան յուզական սահմանները: Դժուար է պատկերացնել ի՞նչ մեծ տարածութիւն կը գոյանար այդ գրականութեան մէջ առանց Թուժանեան աշխարհի, որ թւում է եղել է մշտապէս, դարեր ի վեր, թէեւ մէկ դար է, ինչ արարողը գնացել է:

Եւ այդ աշխարհն այսօր էլ քաշում, հմայում է ամէն հասակի մարդկանց: Կան հեղինակներ, եւ նշանաւոր հեղինակներ, որ մարդուս մշտական ուղեկիցը չեն, պատկանում են նրա մանկութեանը, երիտասարդութեանը կամ հասուն տարիքին, նոյնիսկ՝ ծերութեանը: Հեղինակներ էլ, որ պատկանում են բոլոր հասակներին՝ իբրեւ մարդու մշտական ուղեկիցներ: Թուժանեանն ա՛յս հեղինակներից է: Ոչ ոք չի կարող յիշել ե՛րբ է ծանօթացել նրա հետ, ինչպէս չի կարող յիշել իր վաղ մանկութիւնը: Նրան նախ լսում են, քանի դեռ կարդալ չգիտեն, ապա ընթերցում: Ուրախ, ժպտերես նա մօտենում է մանկանը իբրեւ բարութեան ոգի, պատմում նրան Շան ու Կատուի, Ծիտիկի ու Աղուեսի մասին, առաջ տանում նրան գեղեցկութեան ճամբաներով, մտերմանում եւ մնում նրա հետ մինչեւ խորին ծերութիւն՝ բացելով նրա առաջ մարդկային կրքերի ու կեցութեան խորին գաղտնիքները, տիեզերական վերին խորհուրդը այն պայծառ տրտմութեամբ, որ ունենում են մեծ հոգիները:

Դիւրին բան չէ Թուժանեանի ստեղծագործութեան ըմբռնումը հէնց նրա թուացեալ մատչելիութեան, կարծեցեալ պարզութեան եւ անտարակուսելի հանրաճանաչութեան պատճառով: Մատչելի է, պարզ է, հանրաճանաչ է՝ ասել է թէ ամէնքը գիտեն: Մինչդեռ բնաւ էլ ամէնքը չգիտեն, որ Թուժանեանի երկերում գործում են հէնց այն օրէնքները,



որ ամէնից կայունն են, հասարակական միջավայրով ամէնից քիչ պայմանաւորուածը, ուրեմն՝ ամէնից մնայունը: Թումանեանն արտայայտել է այն, ինչ առհասարակ յատուկ է մարդկային բնութեանը, մարդկային կեանքի ամբողջ բովանդակութեանը՝ իղձերով, հրճուանքով, տառապանքով, բախումներով, հալածանքով ու մաքառմամբ: Սրանով է Թումանեանն արդիական եւ ոչ թէ նրա հայեացքները մեր հայեացքներին յարմարեցնելու անհարկաւոր ջանքերով: Թումանեանը մեզ հետ է մարդկային բնութեան մեկնաբանութեամբ, կեանքի լիաբուռն զգացողութեամբ, բարոյական ընտրութեան ազատութեամբ, մարդկային եւ ազգային արժանապատուութեամբ:

Թումանեանը հայ իրականութեան մէջ բարձր է գնահատուել, բայց այն խօսքերը, որ «Գիրք ճանապարհի» հատորում ասել է Եղիշէ Չարենցը՝ նրա մեծութեան բարձրագոյն գնահատութիւնն են: Յիշենք երեքը. դիմելով հայ բանաստեղծութեան հեռու-հեռաւոր նախնիներին, Եղիշէ Չարենցն ասել է.

... Եւ ձեզանից է ապա սերել  
Այն քերթութիւնը, որ դեռ երէկ  
Լոռու տաղերգուն մեր արդարեւ  
Դարձրեց պայծառ, ինչպէս բիւրեղ:

Եւ ապա՝


Ես կարդում եմ նրան ու ասում.- Այս հմուտ հանճարեղ Լոռեցի  
Հոմերիի, Գեորգէի հետ մի օր՝ հաւասար նստել է քէֆի,  
Եւ թաս է բռնել նրանց հետ, մեծարանք տուել ու առել,  
Ինչպէս իր պապերն են արել իրար հետ խնճոյք նստելիս:

Եւ երրորդը.

... Կայ Մեծարենց, կայ Տէրեան,- եւ բազում ուրիշ պոետներ կան,  
Բայց-Թումանեանն է անհաս Արարատը մեր նոր քերթութեան:

Գնահատութիւնը բնութագրում է նաեւ իրեն՝ գնահատողին. այս խօսքերը կարող էր ասել «Գիրք ճանապարհի» Չարենցը, ա՛յն Չարենցը, որ ոչ թէ «հերքում» էր դասականներին, յաղթահարում աւանդական գեղագիտութիւնը, ինչպէս մի ժամանակ, այլ այն Չարենցը, որ արդէն ստեղծել էր դասական արժէքներ, հասել վերին իմաստութեան եւ ծնրադիր երկիրազօնութիւն ունեւր նախնիների հանդէպ<sup>8</sup>:

Այսպիսի բարձր ու խորունկ արժէքաւորում երբեւէ չի տուել մի հայ բանաստեղծ մէկ ուրիշին. եւ, այնուամենայնիւ, ոչ ոք վերջին խօսք չի ասի Թումանեանի մասին, ինչպէս չի ասի, գուցէ եւ հնարաւոր ու հարկաւոր էլ չէ ասել կեանքի մասին:



<sup>8</sup> Հախումեղեան Լ., Թումանեանի աշխարհը, Երևան, 1966, էջ 42: